ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1990-2001թթ.)

Էդուարդ Պողոսյան
պ.գ.դ., ՀՊՄՀ դոցենտ
Արմինե Եփրիկյան
պ.գ.թ., ՀՊՄՀ դոցենտ

Բանալի բառեր՝ *ՄԱԿ, անկախություն, Հայաստանի Հանրապետություն, ինքնիշխան պետություն, Ղարաբաղյան հիմնահարց, ֆինանսական կառույցներ, տեխնոլոգիաներ, խաղաղ հանգուցալուծման գործընթաց:*

Տակավին անկախության նվաճմանը անմիջապես նախորդող ժամանակահատվածից և հատկապես պետական ինքնիշխանության հռչակումից հետո Հայաստանը հետևողականորեն իրականացնելով միջազգային հարաբերություններում սուբյեկտայնության իր իրավունքը ձեռնամուխ եղավ համաշխարհային հանրության մեջ ներգրավվելու ուղղությամբ վճռական քաղաքական քայլերի, որոնք նախ և առաջ դրսևորվեցին համաշխարհային հեղինակավոր կառույցներին անդամակցելով և միջազգային իրավական դաշտին միանալուն միտված պետական ակտերով:

Ձգտելով դառնալ աշխարհի պետությունների ընկերակցության լիիրավ անդամ և պարտավորվելով իր հարաբերությունները բոլոր երկրների հետ կառուցել միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը տակավին 1991 թվականի սեպտեմբերին, անկախության հանրաքվեից մի քանի օր անց միացավ ԵԱՀԽ ընդունած բոլոր փաստաթղթերին՝ 1975 թվականին Հելսինկյան խորհրդակցության եզրափակիչ ակտին, 1980 թվականի Մադրիդյան հանդիպման եզրափակիչ փաստաթղթին, 1986 թվականի Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթին, 1990 թվականի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթին, 1990 թվականի Փարիզյան խարտիային[1] և այլն, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին[2], միջուկային զենքը չտարածելու մասին ՄԱԿ-ի 1968 թվականի պայմանագրին[3]: Թվում է՝ այնքան էլ անհետաքրքիր չէ այն փաստը, որ հենվելով 1990 թվականի օգոստոսին ընդունված անկախության հռչակագրի վրա՝ Հայաստանը

[1]Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N18 (998), 30 սեպտեմբերի 1991, էջ 5-6, Հայաստանի Հանրապետություն, 25 սեպտեմբերի 1991:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի 1991:
[3]«Հայաստանի Հանրապետության» Գերագույն խորհրդի տեղեկագիր, №18 (998), 30 սեպտեմբերի 1991, էջ 5, «Հայաստանի Հանրապետություն», 25 սեպտեմբերի 1991:

անկախության հռչակումից ամիսներ առաջ, դրսևորելով անկախության ուղին որդեգրած հանրապետության հավատարմությունը. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներին տակավին 1991 թվականի ապրիլին էր միացել Միավորված ազգերի կազմակերպության արդեն հիշատակված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրին և դրան կից ֆակուլտատիվ արձանագրությանը[1]: Այդպիսով կարելի է արձանագրել, որ միջազգային կառույցների ու հատկապես ՄԱԿ-ի հետ ՀՀ համագործակցությունը ձևավորվել էր Հայաստանի անկախության հռչակումից առաջ և նոր թափ ստացավ հանրապետության անկախացումից հետո: Մասնավորապես ակտիվ աշխատանքներ սկսվեցին Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը (ՅՈՒՆԵՍԿՕ) Հայաստանի Հանրապետության անդամակցության ուղղությամբ[2], իսկ 1991 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ-ն միացավ «Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիային[3]: Բարձր գնահատելով Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը՝ անշեղորեն հետևելու ՄԱԿ-ի կանոնադրական սկզբունքներին և նպատակներին, ի պատասխան 1992 թվականի հունվարի 23-ին միջազգային այդ ամենահեղինակավոր կառույցին անդամակցելու Հայաստանի պաշտոնական դիմումի[4], նույն թվականի հունվարի 29-ին ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, իր 3035-րդ նիստում ընդունած թիվ 735 որոշմամբ կազմակերպության գլխավոր ասամբլեային դիմեց Հայաստանի խնդրանքը բավարարելու միջնորդությամբ[5]: Եվ ահա 1992 թվականի մարտի 2-ին Նյու Յորքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 46-րդ նստաշրջանում Հայաստանի Հանրապետությունը միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի անդամ[6]: ՄԱԿ-ին անդամակցելը նախ և առաջ նշանակում էր ճանաչվել, որպես անկախ և ինքնիշխան պետություն, համաշխարհային թատերաբեմում գործող մյուս երկրներին հավասար գործընկեր: Դա նշանակում էր, որ այլևս որպես քաղաքական ամբողջություն հայ ժողովուրդը ևս իրավունք էր ձեռք բերում մասնակցելու, իր ներդրումը բերելու աշխարհում ծավալված գործընթացներին:

Հիրավի, վերջապես հաղթեց պատմական արդարությունը, և հազարամյակների պատմություն ունեցող, քաղաքակրթության ակունքներին կանգնած հնամենի ժողովուրդը իր կերտած անկախ պետության շնորհիվ և նրա միջոցով դարձավ համաշխարհային հանրության լիիրավ անդամ: Հայաստանը ժողովուրդների համաշխարհային ընտանիքի իրավահավասար անդամ դարձավ իր բազմադարյա պատմության ընթացքում նյութական ու հոգևոր արժեքներ կերտելու, համաշխարհային քաղաքակրթությանը իր արժանի նպաստը բերելու իրավունքով ու նաև այն

[1] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №7 (987), 15 ապրիլի 1991, էջ 10-11:

[2] Նույն տեղում, №19 (999), 15 հոկտեմբերի 1991, էջ 14-15:

[3] «Հայաստանի Հանրապետություն», 13 դեկտեմբերի 1991թ., «Հայաստանի Հանրապետություն» միջազգային պայմանագրերի ժողովածու. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004, էջ 45-48:

[4] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում. 15 տարի,-Երևան,: 2007, էջ 9:

[5] «Հայաստանի Հանրապետություն», 31 հունվարի 1992:

[6] ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, ց. 1, գ.8, թ. 21, «Ազգ», 4 մարտի 1992:

իրավունքով, որ Հայաստանը, քննարկվող պատմական ժամանակաշրջանում, թևակոխել էր զարգացման միանգամայն նոր փուլ, հասել էր անկախության և ի լուր աշխարհի հայտարարել առաջադիմության, բարգավաճման ճանապարհով ընթանալու իր նպատակադրումների մասին, որի ընթացքում հայոց պետությունը որպես ուղենիշ ընտրել էր ժողովրդավարությունը, ազատությունը, ինքնիշխանությունը և քաղաքակրթական մյուս գերակա արժեքները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում կազմակերպությանը Հայաստանի անդամակցության կապակցությամբ արտասանած իր ճառում ՀՀ արտգործնախարար Ռ. Հովհաննիսյանը, ըստ էության արտահայտելով հայ ժողովրդին պատած զգացումները, մասնավորապես նշեց »…Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների դրոշների կողքին այսօր ծածանվեց նաև մեր եռագույնը՝ մեր իրձների, մեր ինքնության, մեր ազատության դրոշը«[1]:

1992 թվականի մայիսից Հայաստանը ՄԱԿ-ում ունեցավ իր մշտական ներկայացուցիչը[2]: Ըստ նախապես կնքված համաձայնագրերի՝ 1992 թվականի դեկտեմբերին ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվական վարչությունն ու Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի լիազորությամբ Երևանում հիմնադրեցին Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակը[3], որը 1998 թվականին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվեց որպես ՄԱԿ-ի շենք, որը համատեղ սկսեցին օգտագործել Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մեջ մտնող մի շարք մասնագիտացված գործակալություններ, ծրագրեր, հիմնադրամներ, ինչպես օրինակ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, Պարենի համաշխարհային ծրագիրը, Մանկական հիմնադրամը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, ՄԱԿ-ի Մարդասիրական վարչությունը և այլն[4]: Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ի առաջին համակարգված միջոցառումներից էր, որին տակավին 1992 թվականին միացել էր Հայաստանի Հանրապետությունը: Այդ ծրագրի կենսագործմամբ ՄԱԿ-ը, խրախուսելով նորանկախ Հայաստանի տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ բնագավառներում սկսված բարեփոխումները, միաժամանակ հանրապետությանը տրամադրում էր տեղեկատվություն և միջոցներ կյանքի որակը հանրապետությունում բարձրացնելու համար: Հայաստանի Հանրապետությունում իր հիմնադրման պահից Զարգացման ծրագիրը խորհրդատվական աջակցություն էր ցույց տալիս քաղաքականության մշակման բնագավառում, ինչպես նաև տեխնիկական բնույթի համագործակցություն էր ծավալում իշխանական օղակների հետ ժողովրդավարական կառավարման, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների, աղքատության նվազեցման, էներգետիկայի ու բնապահպանության և այլ ոլորտներում[5]: Ինչպես արդեն պարզ դարձավ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գործողությունները մշակվում էին Հայաստանի կառավարության հետ համատեղ, ինչպես նաև այդ ոլորտում ազգային ու միջազգային այլ գործընկեր հաստատությունների հետ ակտիվ

[1] «Հայաստանի Հանրապետություն», 3 մարտի 1992:
[2] «Հայաստանի Հանրապետություն» , 7 մայիսի 1992:
[3] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում.Երևան, 2003, էջ 10, 132, «Հայաստանի Հանրապետություն», 12 հունիսի 1992:
[4] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում.15 տարի, Երևան, 2007, էջ 10-11:
[5] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում. Երևան, 2003, էջ 17-18:

փոխգործունեության արդյունքում[1]: Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի առաջին փուլը, որն ընդգրկում էր 1992-2000 թվականները, միտված էր նպաստելու քաղաքական ու տնտեսական առումով անցումային շրջանում գտնվող ՀՀ-ում ազգային, տարածաշրջանային և տեղական կառավարման մակարդակների բարձրացմանը, աղքատության արդյունավետ վերացման նպատակով բազմակողմ մոտեցումների ապահովմանը և այլն[2]: 2000 թվականից ՀՀ-ում սկսվեց Զարգացման ծրագրի հանրապետության կառավարության, ՄԱԿ-ի համապատասխան գործակալությունների և միջազգային դոնոր համայնքի հետ համատեղ ջանքերով մշակված երկրորդ փուլը, որի գլխավոր խնդիրներից էին զարգացման ազգային նպատակների սատարումը, հանրապետությունում անցումային շրջանի բացասական հետևանքների հաղթահարման ուղղությամբ երկրի իշխանությունների գործունեությանը աջակցելը, ինչպես նաև ՀՀ-ում կյանքի բոլոր բնագավառները ընդգրկող համապարփակ զարգացման ուղիների որոնումը: Հարկ է նշել, որ Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ը Հայաստանում իրականացնում էր բացառիկ հետևողականությամբ: 1993-ից մինչև 2000-ականների սկիզբը ՄԱԶԾ-ի կողմից հանրապետությունում իրականացված ծրագրերի ընդհանուր ծավալը դրամական արժեքով կազմել էր ավելի քան 16 մլն դոլար[3]: Այդպիսով փաստորեն ՄԱԿ-ը Հայաստանում իր գործունեությունը սկսեց Զարգացման ծրագրի կենսագործմամբ, որն էլ ժամանակի ընթացքում համալրվեց Միավորված ազգերի կազմակերպության այլ կարգի ֆունկցիաներ իրականացնող օղակներով: Այսպես, տակավին 1992 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետությունը դարձավ ՄԱԿ-ի համաշխարհային առողջապահության կազմակերպության, արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի անդամ[4], իսկ 1992 թվականի հունիս, սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետությունը դարձավ ՄԱԿ-ի երկու խոշորագույն ֆինանսական կառույցների Միջազգային վալյուտային հիմնադրամի[5] և Համաշխարհային բանկի խմբի գլխավոր վարկատու կազմակերպության՝ վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի անդամ[6] և այլն:

2000-ականների սկզբին Հայաստանում ՄԱԿ-ի համակարգը ներառում էր հանրապետությունում մշտական ներկայացուցչություն ունեցող 11 գրասենյակներ, գործակալություններ, ծրագրեր և հիմնադրամներ, որոնց մեջ արդեն հիշատակված Զարգացման ծրագրի հետ մտնում էին նաև փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և այլն: Քննարկվող ժամանակահատվածում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ ակտիվորեն համագործակցում և ՀՀ-ում Միավորված ազգերի կազմակերպության համակարգի անդամներից էին նաև շուրջ մեկ տասնյակ հաստատություններ, որոնք հանրապետությունում չունեին մշտական ներկայացուցչու-

[1] Նույն տեղում, էջ 17:

[2] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2003, էջ 18:

[3] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2003, էջ 18:

[4] «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի 1992:

[5] «Ազգ», 22 ապրիլի 1992, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Հ.8 (1012), 30 ապրիլի 1992, էջ 11-15:, «Հայաստանի Հանրապետություն», 2 հունիսի 1992:

[6] «Հայաստանի Հանրապետություն», 18 սեպտեմբերի 1992:

թյուններ: Այդպիսիք էին օրինակ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, Արդյունաբերության զարգացման կազմակերպությունը, Առևտրի և զարգացման հարցերի համաժողովը, Միջազգային զարգացման ընկերակցությունը և այլն[1]: Հայաստանի Հանրապետությունում իրենց գործունեությունը ծավալած ՄԱԿ-ի բոլոր գործակալությունները, ծրագրերն ու հիմնադրամները միավորված էին մեկ համակարգի մեջ, որի ղեկավարը կամ համակարգողն էլ հենց հանդիսանում էր ՀՀ-ում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի ներկայացուցիչը: Հայաստանում որպես ՄԱԿ-ի միջանկյալ գրասենյակի տնօրեն և մշտական համակարգող առաջինը 1992-ից մինչև 1994 թիվը հանդիսացել է Թ. Օ'Կոն-Սոլոր Սանոն[2]:

Հիրավի, անգնահատելի էր խնդրո առարկա ժամանակահատվածում, հատկապես հասարակական-քաղաքական ու տնտեսական ոլորտներում արմատական հեղաբեկում իրականացնող Հայաստանում, Միավորված ազգերի կազմակերպության խաղացած բացառիկ դերը: Օրինակ ՀՀ-ում ՄԱԿ-ի կառույցներից Զարգացման ծրագիրը ակտիվորեն աջակցում էր Հայաստանում թափանցիկ և հաշվետու կառավարման մեխանիզմների հաստատմանը, օժանդակում էր հանրային հատվածի բարեփոխումներին, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կառավարման ապակենտրոնացմանը միտված նախաձեռնություններին: ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը պրակտիկ քայլեր էր իրականացնում երկրում գործազրկության և աղքատության նվազեցման ուղղությամբ և այլն: Վերոհիշյալ և բազմաթիվ համանման այլ խնդիրների լուծման նպատակով Հայաստանում ՄԱԿ-ի ձեռնարկած քայլերից էին՝ անմիջական նյութական օժանդակության ցուցաբերումը, տնտեսության, հասարակական, քաղաքական կյանքի առանձին խնդիրներին նվիրված ուսումնական ծրագրերի իրականացումը, մասնագիտական տեղեկատվության ապահովումը և այլն: Այսպես ՀՀ-ում ընտրական համակարգի համապարփակ բարելավման նպատակով ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը նորանկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ 1998 թվականի արտահերթ նախագահական ընտրությունների կապակցությամբ կազմեց և գործարկեց էլեկտրոնային հատուկ էջ, իսկ հաջորդ տարի էլ ՀՀ ԱԺ ընտրությունների ընթացքում իրականացնում էր այդ կարևորագույն պետականաստեղծ գործընթացի տեխնիկական և դիտորդական օժանդակության համակարգումը: Հաջորդ ժամանակահատվածում ՄԱԿ-ի իրականացրած »Օժանդակություն ժողովրդավարական գործընթացներին Հայաստանում« ծրագիրը ներառում էր ընտրություններին ցուցաբերվող տեխնիկական աջակցություն, օժանդակ նյութերի պատրաստում և հրատարակում, ողջ հանրապետությունում ընտրական հանձնաժողովների ավելի քան 17 հազար անդամների ուսուցում, տեղեկատվական քարոզարշավ, օժանդակություն ընտրության արդյունքների համակարգչային հաշվարկման գործում և այլն[3]: Կոնկրետ Հայաստանի պարագայում բավականին արդյունավետ էին նաև

[1] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում.-Երևան, 2003թ., էջ 13-14, «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի 1992, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», Հ. 5-6 (1105-1106), մարտ 1996թ., էջ 10, «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N25 (91), 30 սեպտեմբերի 1999, էջ 120-127:

[2] «Հայաստանի Հանրապետություն», 5 դեկտեմբերի 1992:

[3] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում,Երևան, 2003, էջ 20-21:

ՄԱԿ-ի օժանդակությամբ կազմվող ՀՀ տարբեր բնագավառներում արդեն կատարվածը ամփոփող և միաժամանակ հետագա խնդիրները ուրվագծող փաստաթղթերը: Այդպիսին էր, ասենք 1997-1999 թվականներին հրապարակված «Զեկույց զարգացմանն ուղղված համագործակցության մասին» պետական և ոչ պետական մակարդակներով Հայաստանին ցուցաբերված օգնության և տեղում դրա օգտագործման պատկերը ներկայացնող փաստերի և վերլուծությունների ժողովածուն[1]: Սկսած 1995 թվականից՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախաձեռնությամբ և անմիջական նյութական ու մեթոդական օժանդակությամբ հանրապետության անկախ փորձագետների կողմից մշակվում ու հրապարակվում էին այսպես կոչված »Մարդկային զարգացման ազգային զեկույցի« ամենամյա ստվարածավալ համարները: Դրանք, ըստ էության, հանդիսանում էին կենտրոնացված քաղաքական ու տնտեսական համակարգից դեպի ազատական հասարակական հարաբերությունների և շուկայական տնտեսության ընթացող Հայաստանի Հանրապետության նկարագիրը տարվա կտրվածքով:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի այդ նախաձեռնության նկատմամբ ՀՀ իշխանությունների շահագրգիռ վերաբերմունքի վկայությունն էր այն, որ 1994 թվականին Հայաստանի կառավարության որոշմամբ Մարդկային զարգացման ազգային զեկույցի պատրաստման կազմակերպման և համակարգման նպատակով ստեղծվել էր հանրապետության տարբեր ոլորտների բարձրաստիճան պաշտոնյաներից և ՀՀ-ում ՄԱԿ-ի ներկայացուցչության ղեկավարներից կազմված 14 հոգանոց մի հանձնաժողով[2]: Ըստ էության ազգային զեկույցները կարճ ժամանակում Հայաստանում վեր էին ածվել յուրօրինակ քարոզչական զենքի, որը կոչված էր նպաստելու անցումային հասարակության մեջ ժողովրդավարության և համընդհանուր ազատականության համամարդկային գաղափարների ներդրմանը[3]:

Նորանկախ Հայաստանի վերակառուցվող տնտեսության համար չափազանց կարևոր էր ՄԱԿ-ի ֆինանսական կառույցների հետ փոխգործունեությունը: Միավորված ազգերի կազմակերպության հիմնական ֆինանսական օղակների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը սկսվել էր տակավին այդ կառույցների մեջ ներգրավվելու նախնական շրջանից: Այդ փուլում համագործակցության հիմնական բնագավառներն էին ՀՀ գյուղատնտեսությունը, էներգետիկան և աղետի գոտին[4]: ՄԱԿ-ի ֆինանսական կառույցները մասնագիտական ակտիվ օգնություն էին ցուցաբերում նաև

[1] Նույն տեղում, էջ 22:

[2] ՀԱԱ, ֆ.113, ց.172, գ. 329, թ.1-2:

[3] Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1995, Երևան, 1995, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1996, Երևան, 1996, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1997, Երևան, 1997, Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 1998, Պետության դերը, Երևան 1998, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999. Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում, Երևան, 1999, Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2000, Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը. գործողություն հանուն առաջընթացի,- Երևան, 2000, Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում.- Երևան, 2001:

[4] «Հայաստանի Հանրապետություն», 23 սեպտեմբերի 1992թ., 1 մայիսի 1993.:

նորանկախ Հայաստանում բանկային գործի ու ողջ ֆինանսավարկային համակարգի կայացման գործընթացին[1]: Հենց 1992 թվականին ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ձեռք բերված համաձայնությամբ ՄԱԿ-ի կառույցը աղետի գոտու վերականգնման համար պետք է տրամադրեր 30-40 մլն դոլարի երկարաժամկետ վարկ, ինչպես նաև անհատույց օգնություն[2]: ՀԲ-ի ինստիտուցիոնալ բարեփոխումների համար հատկացված 12 մլն դոլարի վարկից 1993 թվականին կայացված համաձայնությամբ Հայաստանին տրամադրվեց ավելի քան 3 մլն դոլար գործազրկությունից մարդկանց պաշտպանելու, նրանց վերամասնագիտացման աշխատանքների կազմակերպման և զբաղվածության ծառայությունների վերաբաշխման նպատակով[3]: 1992-ից մինչև 1994 թվականի կեսերը ՀԲ-ն Հայաստանում իրականացվող ամենատարբեր ծրագրերի համար տրամադրել էր 107 մլն դոլար վարկ՝ այդ թվում 40 մլն ոռոգման ենթակառուցվածքների բարելավման, 30 մլն դոլար էներգետիկայի համակարգի զարգացման համար[4] և այլն: Աղետի գոտում ՀԲ-ի առաջին խոշոր ծրագիրը դա վերականգնման նպատակներով 28 մլն դոլարի վարկի միանվագ տրամադրումն էր 1994 թվականին: Վարկը տրամադրվեց 35 տարի ժամկետով և 0,5 տոկոսով: Համաշխարհային բանկի աղետի գոտու վերականգնման տնօրինությունը ծրագրել էր շահագործման հանձնված և արդեն իսկ ՀԲ-ի միջոցներով սնփականաշնորհված բնակարանների տերերից գանձել դրանց առանց այն էլ ցածր արժեքի՝ 2600 դոլարի ընդամենը 2%-ը, այն էլ 25 տարվա ընթացքում[5]: 1994 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարությունում ստորագրված պայմանագրով Համաշխարհային բանկը Հայաստանին 35 տարով 20 մլն դոլարի անտոկոս նոր վարկ տրամադրեց[6]: Համաշխարհային բանկի տրամադրած վարկերով ռեալ վերակառուցողական գործունեություն էր ծավալվել հատկապես աղետի գոտում: Այսպես, ՀԲ-ի հատկացված վարկի հաշվին աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման գրասենյակը շինարարական վերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով 1995 թվականի ընթացքում կատարել էր մոտ 15 մլն 350 հազ. դոլարի շինարարական աշխատանքներ: Ընդհանուր առմամբ 1994 թվականից մինչև 1996 թվականի վերջը աղետի գոտու վարկի հաշվին իրականացվել էին մոտ 27 մլն 630 հազ. դոլարի շինարարական վերականգնողական աշխատանքներ[7]: Քննարկվող ժամանակահատվածում ընդհանրապես Հայաստանին տրամադրված օտարերկրյա վարկերի գերակշռող մասը հատկացրել էր ՄԱԿ-ի Համաշխարհային բանկը: Այսպես, 1990-ականների կեսերին Հայաստանին արտերկրից տրամադրված բոլոր վարկերի 60 տոկոսը կազմում էին ՀԲ-ի արտոնյալ վարկերը[8]: 1995 թվականի վերջերին ՀԲ-ի հետ Հայաստանի կառավարության կայացված համաձայնությամբ վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանին տարեկան լրացուցիչ

[1] Նույն տեղում, 21 հոկտեմբերի 1992:
[2] Նույն տեղում, 16 դեկտեմբերի 1992:
[3] «Հայաստանի Հանրապետություն», 24 փետրվարի 1993, 18 հունիսի 1994, 9 դեկտեմբերի 1995:
[4] Նույն տեղում, 18 հունիսի 1994:
[5] «Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստոսի 1994:
[6] Նույն տեղում, 21 սեպտեմբերի 1994:
[7] Նույն տեղում, 18 մարտի 1997:
[8] Նույն տեղում, 9 դեկտեմբերի 1995:

տրամադրվում էր 150 մլն դոլար վարկ[1]: 1993-ից մինչև 1996 թվականը ներառյալ Համաշխարհային բանկը Հայաստանին տրամադրել էր շուրջ 280 մլն դոլարի վարկ, որոնցով ինչպես արդեն նշել ենք իրականացվել էին ամենատարբեր ծրագրեր՝ աղետի գոտու վերականգնում, սոցիալական իրավիճակի բարելավմանը, նպատակամղված կառուցվածքային վերափոխումներ, այդ վերափոխումների տեխնիկական աջակցության ծրագրեր և այլն: Նշված և մի շարք այլ ծրագրեր հիմնականում ուղղված էին բնակչության սոցիալական պաշտպանվածությանը, ֆինանսական ինստիտուտների և էներգետիկայի զարգացմանը, մասնավոր ձեռնարկատիրության և սեփականաշնորհման աջակցությանը: ՀԲ-ն այդ նպատակներով բացի աղետի գոտու, ինստիտուցիոնալ վերափոխումների և այլ ծրագրեր ուղղակի վարկավորելուց անմիջական ֆինանսական օգնություն էր ցուցաբերում տնտեսության մասնավոր հատվածին և այլն, իրականացնում էր մեծ ծավալի խորհրդատվական, տեղեկատվական գործունեություն[2]: Այսպես, միայն 1998 թվականի ընթացքում Համաշխարհային բանկի տրամադրած վարկի հաշվին իրականացվել էին 14 մլն դոլարի կառուցապատման շինարարական աշխատանքներ, շուրջ 8 մլն դոլարի մագիստրալային և ներտնտեսային ոռոգման ջրանցքների, պոմպակայանների, խորքային հորերի վերականգնման աշխատանքներ, շուրջ 2 մլն դոլարի շինարարական աշխատանքներ էներգետիկայի ոլորտում, ինստիտուցիոնալ վերակառուցումների նպատակով շուրջ 4 մլն դոլարի շինարարություն է իրականացրել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցով[3] և այլն: Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող օժանդակությունը չթուլացող տեմպերով շարունակվում էր նաև հետագա տարիներին:

Հայաստանում կառուցվածքային վերափոխումների, մասնավորապես բաշխիչ էլեկտրական ցանցերի մասնավորեցումը իրականացնելու նպատակով Համաշխարհային բանկը 2001 թվականի ապրիլին ՀՀ կառավարությանը հատկացրեց 50 մլն դոլար վարկ[4], իսկ հուլիսին ՀԲ խորհրդատվական խմբին Փարիզում Հայաստանի կառավարության կողմից, հանրապետությունում իրականացվող վերափոխումների վերաբերյալ, տրված մանրամասն հաղորդումից հետո Համաշխարհային բանկը դոնորների հետ միասին որոշում կայացրին 2001-2003 թվականներին Հայաստանին տրամադրել 620 մլն ԱՄՆ դոլարի օժանդակություն[5] և այլն:

1992 թվականին ՄԱԿ-ի մյուս խոշոր ֆինանսական կառույցին՝ Արժույթի միջազգային հիմնադրամին անդամակցած Հայաստանի նախնական վարկային հասույթը սահմանվել էր մոտ 130 մլն դոլար[6]: Ըստ ՀՀ կառավարության հետ կայացած հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածությունների ԱՄՀ-ն ակտիվորեն մասնակցում էր նաև Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի բարեփոխումներին ու բանկային գործի կատարելագործմանն առնչվող խնդիրների

[1] Նույն տեղում, 9 դեկտեմբերի 1995:
[2] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Հ.6 (1082), 31 մարտի 1995թ., էջ 37, «Հայաստանի Հանրապետություն», 18 հունիսի 1994թ., 2 մարտի, 26 հոկտեմբերի 1996, 22 հունվարի, 1997:
[3] «Հայաստանի Հանրապետություն» , 26 մարտի, 1999:
[4] Նույն տեղում, 1 մայիսի 2001:
[5] «Հայաստանի Հանրապետություն», 13 հուլիսի, 2001:
[6] Նույն տեղում, 2 հունիսի 1992:

լուծմանը: Համագործակցության նախնական փուլում ԱՄՀ-ի անմիջական մասնակցությամբ մշակվեցին »Կենտրոնական բանկի մասին« և »Բանկերի և բանկային գործունեության մասին« ՀՀ օրենքները: Միաժամանակ ՀՀ նորաստեղծ կենտրոնական բանկում ձևավորվել էր ԱՄՀ-ի խորհրդատուների ինստիտուտ: Հետաքրքիր է նշել, որ սկսած 1992 թվականից ԱՄՀ-ն օժանդակում էր ՀՀ-ում ազգային դրամի ներդրման հետ առնչվող աշխատանքներին[1]: Հետագայում Արժույթի միջազգային հիմնադրամը ակտիվ խորհրդատվական գործունեություն էր ծավալել ՀՀ-ում ընթացող մասնավորեցման, աշխատավարձի, ինքնակառավարման, պետական սուբսիդավորման արդյունավետության բարձրացման, գների ակտիվացման, բյուջետային համակարգի ձևավորման գործընթացներին աջակցելու ուղղությամբ[2]: Իր կողմից էլ Հայաստանը անվերապահորեն կատարում էր ԱՄՀ-ից աջակցության դիմաց առաջադրված նախապայմանները, որոնք հիմնականում վերաբերում էին տնտեսության հետագա արդիականացմանը, տրամադրված միջոցների նպատակային օգտագործմանը և այլն[3]: Ծագած խնդիրների օպերատիվ լուծմանը, ստեղծված կոնկրետ իրավիճակում մասնագիտական խորհրդատվության ապահովմանը, Հայաստանում ծավալված վերափոխումների իրական վիճակի մասին տեղեկատվության ստացմանը մեծապես նպաստում էին ՀՀ իշխանությունների և Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավարների պարբերական հանդիպումները, ԱՄՀ-ի առաջատար մասնագետներով համալրված պատվիրակությունների պարբերական այցերը Հայաստանի Հանրապետություն: Այսպես, 1992-ից մինչև 1996 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածում Հայաստան էր այցելել ԱՄՀ-ի շուրջ 50 այդպիսի պատվիրակություն[4]: Փաստորեն ՀՀ-ում տնտեսական բարեփոխումները ԱՄՀ-ի հետ համագործակցության շրջանակներում հիմնականում ներառում էին Հայաստանի տնտեսական վերափոխումների համար հույժ կարևոր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք էին ֆինանսական, հարկաբյուջետային, բանկային, վիճակագրության բնագավառները և այլն: Հասկանալի է, որ թվարկված և բազմաթիվ այլ խնդիրների լուծման համար Արժույթի միջազգային հիմնադրամը անպայման պետք է որոշակի ֆինանսական հատկացումներ կատարեր, տրամադրեր վարկեր և այլն: Այսպես 1994 թվականին ԱՄՀ-ն Հայաստանին տրամադրել էր 27 մլն դոլարի վարկ հանրապետության վճարային հաշվեկշռի պակասորդը փակելու համար, իսկ 1995 թվականից ՀՀ-ին հատկացրել էր ևս 63 մլն դոլարի վարկ երկրում կառուցվածքային փոփոխությունները արագացնելու նպատակով[5] և այլն: Նույն թվականի աշնանը Հայաստանին ՄԱԿ-ի 2 գլխավոր վարկատու ֆինանսական կառույցների Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի ամենամյա ժողովը, որոշեց ՀՀ-ի արդյունաբերության, մասնավորապես, պոնձաձուլության զարգացման ծրագրերի իրագործման նպատակով յուրաքանչյուր տարի Հայաստանին տրամադրել մոտ 400 մլն դոլար ցածր տոկոսադրույքով վարկ[6]: Սկսած 1999 թվականից՝ ԱՄՀ-ն հատկապես մեծ ծավալի

[1] «Հայաստանի Հանրապետություն», Գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.).-Երևան,1995, էջ 480-501:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 13, 18 հոկտեմբերի, 12 նոյեմբերի 1994թ.,30հունիսի 1995:
[3] Նույն տեղում, 24 սեպտեմբերի, 1994:
[4] «Հայաստանի Հանրապետություն», 14 մարտի 1996:
[5] Ազգ, 4 հոկտեմբերի 1994թ., «Հայաստանի Հանրապետություն», 30 հունիսի, 1995:
[6] «Հայաստանի Հանրապետություն», 14 հոկտեմբերի, 1995:

գործունեություն էր ծավալել Հայաստանում էներգետիկ ոլորտի բարեփոխումների, արդեն կայացած բանկային և հարկային համակարգերի կատարելագործման, ձեռք բերված մակրոտնտեսական կայունության ամրապնդման և մի շարք այլ հրատապ հարցերի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ[1] և այլն:

Հայաստանում ՄԱԿ-ի բացառիկ հաջողությամբ իրականացված ծրագրերից էր Պարենի համաշխարհային ծրագիրը: 1993 թվականին Հայաստանում հաստատվելուց հետո իր գոյության մոտ 10 տարվա ընթացքում այդ ծրագրի կենսագործումը էապես նպաստել էր հանրապետությունում սոցիալական կացության բարելավմանը: Այդ ընթացքում Պարենի համաշխարհային ծրագիրը ՀՀ-ին տրամադրել էր շուրջ 52 մլն դոլարի 107 հազար տոննա մարդասիրական օգնություն, որից օգտվել էր տարեկան միջին հաշվով Հայաստանի ավելի քան 200 հազար կարիքավոր քաղաքացի[2]: Հայաստանի Հանրապետությունում նույն հաջողությամբ էին գործում ՄԱԿ-ի՝ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, Մանկական հիմնադրամը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը և այլն: 1999 թվականից Հայաստանի Հանրապետությունը ակտիվ գործունեություն էր ծավալել ՄԱԿ-ի Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անդամակցելու նպատակով երկրում տակավին 1992 թվականից նախաձեռնված անհրաժեշտ բարեփոխումների իրականացման ուղղությամբ[3]:

ՄԱԿ-ին ՀՀ անդամակցումից հետո Միավորված ազգերի կազմակերպությունը ակտիվորեն արձագանքում էր նորանկախ Հայաստանի համար ամենակարևոր հիմնախնդրին՝ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի արդյունքում ծագած, հայ-ադրբեջանական առճակատմանը, Արցախում ծավալված իրադարձություններին[4]: Դրան էապես նպաստում էր այն հանգամանքը, որ տակավին 1992 թվականի հունվարի սկզբին ԼՂ խորհրդարանը դիմել էր Միավորված ազգերի կազմակերպությանը օգնության խնդրանքով[5]: ՄԱԿ-ը հենց սկզբից, իրավիճակին տիրապետելու նպատակով հակամարտության գոտի էր ուղարկում փաստահավաք խմբեր և պատվիրակություններ[6]: Քննարկվող ժամանակահատվածում ՄԱԿ-ի բազմաթիվ կառույցներ հանդես են եկել հայտարարություններով, կայացրել բանաձևեր: Այդ ուղղությամբ հատկապես մեծ ծավալի աշխատանք էր իրականացրել ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, որում ղարաբաղյան հիմնահարցը սկսած 1992թ. հոկտեմբերից հաճախակի եղել է քննարկման առարկա[7]: Անվտանգության խորհուրդը իր որոշումներում բազմիցս դատապարտել է ԼՂ-ի ու Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիան, շրջափակումները և այլն[8]: Միայն 1993թ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի կապակցությամբ ՄԱԿ-ում ընդունվել էին խոշորամասշտաբ երեք բանաձևեր[9]: Ղարաբաղյան հիմնահարցի

[1] Նույն տեղում, 14 մայիսի, 22 հունիսի, 8 հուլիսի, 17 սեպտեմբերի 1999:
[2] Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում.-Եր.: 2003, էջ 59:
[3] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №25 (91), 30 սեպտեմբերի 1999, էջ 120-127, №6 (104), 5 ապրիլի 2000, էջ 88-89:
[4] «Հայաստանի Հանրապետություն», 29 հունվարի, 5, 10 մարտի 1992:
[5] Նույն տեղում, 4 հունվարի 1992թ.:
[6] Նույն տեղում, 14, 21, 23, 26 մայիսի, 1 հունիսի, 10 դեկտեմբերի 1992թ., 26 մարտի 1993թ.:
[7] Նույն տեղում, 28 հոկտեմբերի 1992թ.:
[8] Նույն տեղում, 14 մայիսի, 9 հունիսի 1992թ.
[9] Նույն տեղում, 4 մայիսի, 22 հոկտեմբերի, 16 նոյեմբերի 1993թ.:

խաղաղ լուծման ուղղությամբ իր ակտիվ գործունեությունը ՄԱԿ-ը շարունակում էր նաև հետագայում:

Ամփոփում

Միջազգային կառույցների և հատկապես ՄԱԿ-ի հետ Հայաստանի համագործակցությունը ձևավորվել էր տակավին ՀՀ անկախության հռչակմանը անմիջապես նախորդող ժամանակահավածից և նոր թափ ստացավ հանրապետության անկախացումից հետո: 1992 թ. ՄԱԿ-ին անդամակցելով ՀՀ-ն ճանաչվեց, որպես անկախ և ինքնիշխան պետություն, համաշխարհային թատերաբեմում գործող երկրներին հավասար գործընկեր: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին առընթեր գործում էին մի շարք մասնագիտացված գործակալություններ, ծրագրեր, հիմնադարամներ: 2000-ականների սկզբին ՄԱԿ-ի համակարգը ներառում էր հանրապետությունում մշտական ներկայացչություններ ունեցող 11 կառույցներ և էլի շուրջ մեկ տասնյակ հաստատություններ, որոնք հանրապետությունում գրանցված չէին: Այդ կառույցները աջակցություն էին ցուցաբերում նորանկախ Հայաստանի Հանրապետությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում վարվող քաղաքականության մշակման և իրականացման բնագավառում, տեխնիկական բնույթի համագործակցություն էին իրականացնում իշխանական օղակների հետ ժողովրդավարական կառավարման, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների, աղքատության նվազեցման, էներգետիկայի ու բնապահպանության և այլ ոլորտներում: Նորանկախ Հայաստանի վերակառուցվող տնտեսության համար չափազանց արգասաբեր էր ՄԱԿ-ի ֆինանսական կառույցների հետ ՀՀ փոխգործունեությունը:

ՄԱԿ-ը, քննարկվող ժամանակահատվածում, նաև ակտիվորեն աջակցում էր Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ հանգուցալուծման գործընթացին:

Из истории деятельности организации объединенных наций в процессе утверждения независимой государственности в Армении (1990-2001гг.)

Э. Погосян,
доктор исторических наук, доцент АГПУ им. Х. Абовяна
А. Еприкян,
кандидат исторических наук, доцент АГПУ им. Х. Абовяна

Резюме

Ключевые слова: ООН, независимость, Республика Армения, суверенное государство, Карабахский вопрос, финансовые структуры, технологии, мирное урегулирование

Сотрудничество Армении с международными структурами, в особенности с ООН, сформировалось еще с периода, непосредственно предшествовавшего провозглашению независимости РА, и получило новый размах после достижения независимости. В 1992 году став членом ООН, РА была признана независимым,

суверенным государством и равноправным партнером действующих на мировой арене стран. При представительстве ООН в Армении действовал целый ряд специализированных агентств, программ, фондов. В начале 2000-х годов система ООН состояла из 11 структур, имеющих свои постоянные представительства в республике, и еще около десятка незарегистрированных учреждений. Эти структуры оказывали поддержку достигшей независимости Республике Армения в деле разработки и реализации осуществляемой политики в различных сферах общественной жизни, осуществляли сотрудничество технического характера со звеньями власти в сфере демократического управления, информационных и коммуникативных технологий, сокращения бедности и т.д. Для перестройки экономики провозгласившей независимость Армении сотрудничество РА с финансовыми структурами ООН было очень плодотворным. В обсуждаемый период ООН также активно содействовало процессу мирного урегулирования Карабахского вопроса.

From the History of UNO Role in the process of Establishment of Armenia as an Independent State

E. Poghosyan,
Ph Doctor of Historical Sciences, ASPU after Kh. Abovyan
A.Eprikyan,
Ph Assistant of Historical Sciences, ASPU after Kh. Abovyan

Summary

Key words: UNO, independence, Republic of Armenia, sovereign state, Kharabakh conflict, financial structures, technologies, peaceful solution.

The coordination of Armenia with international structures and especially UNO had initially been formulated long before the Republic of Armenia proclaimed its independence and prospered after the Republic got its independence. In 1992 the Republic of Armenia was admitted in the membership of UNO, was recognized as an independent and sovereign state, as well as an equal partner among all the countries in the world. A number of specialized agencies , programs and funds started their activities together with the Armenian foundation of UNO.

At the beginning of 2000 the system of UNO involved permanent representatives in the Republic from 11 structures , also about a dozen institutions which weren't registered in the Republic. These structures supported the newly established Armenian Republic in different spheres of social life, in the field of elaboration and policy realization, working out the coordination of technical type with various authorities , democratic government, mass media and communication technologies , reducing poverty, energetic, defense of natural resources and other fields. For the reconstruction of economy of the independent Armenia the collaboration with the financial structures of the UNO was very significant. In the discussed period the UNO also actively supported the process for the peaceful solution of the Kharabakh conflict.